ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/147

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.10.2018թ. թիվ 01.1/26-3/18831-18 գրությամբ «Նյուպլաստ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ 09103261) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի 02.10.2018թ. թիվ Ե 619 և 09.10.2018թ. թիվ Ե 639 գրությունների հիման վրա, 16.10.2018թ. նախաձեռնել է «Նյուպլաստ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 02.10.2018թ. թիվ Ե 619 և 09.10.2018թ. թիվ Ե 639 գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ներկայացնելով Ախուրյանի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԱՀԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Նյուպլաստ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Նյուպլաստ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Նյուպլաստ» ՓԲԸ-ն 23.10.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

« Գործի նախապատմությունը և փաստերը.

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԱՀԳՀԱՊՁԲ–18/11» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 19.09.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Նյուպլաստ» ՓԲԸ-ն և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.09.2018թ. հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 27.09.2018թ. տրվել է եզրակացություն, որի համաձայն «Նյուպլաստ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (19.09.2018թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի

կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ (91,000 ՀՀ դրամ):

Այնուհետև, Ախուրյանի համայնքապետարանի ղեկավարի կողմից «Նյուպլաստ» ՓԲԸ-ի մասնակցության հայտը (կից փաստաթղթերով) ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն «Նյուպլաստ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Նյուպլաստ» ՓԲԸ-ն 19.09.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրը) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 91,000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հայտնում ենք, որ «Նյուպլաստ» ՓԲԸ-ի մոտ 91.000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով (համապատասխան ապացույցը կցվում է):

Գտնում ենք, որ «Նյուպլաստ» ՓԲԸ-ն «ԱՀԳՀԱՊՁԲ–18/11» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում չի խախտել ստանձնած պարտավորություն հետևյալ հիմնավորմամբ.

Նախ, պետք է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Սակայն, Ախուրյանի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԱՀԳՀԱՊՁԲ–18/11» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում բացահայտվել է, որ «Նյուպլաստ» ՓԲԸ-ն ունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով (նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից), պարզվել է (ՀՀ ԿԱ ՊԵԿ թեժ գծին կատարած զանգից), որ ս.թ. հուլիսին վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևում կատարվել են փոփոխություններ, և որպես վերահսկվող եկամուտների գծով առանձին պարտավորություն է դիտարկվել նաև դրոշմանիշների վճարը՝ առանձին տողի ձևով: Պետք է նշել, որ վկայակոչված հրամանը հասանելի չէ, այն հրապարակված չէ, և «Նյուպլաստ» ՓԲԸ-ն չէր կարող տեղյակ լինել, որ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը այսուհետ դիտարկվել է որպես վերահսկվող եկամուտների գծով առանձին պարտավորություն, և Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնելով և հավաստելով, որ բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, նման պայմաններում, մեր կարծիքով, չի խախտել գնման գործընթացում ստանձնած որևէ պարտավորություն:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «Նյուպլաստ» ՓԲԸ-ն 19.09.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի (կցվում է): Եվ պետք է նշել, որ «Նյուպլաստ» ՓԲԸ-ի միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ «Նյուպլաստ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում վկայակոչված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ «Նյուպլաստ» ՓԲԸ-ն թյուրիմացության մեջ է գցել նաև այն հանգամանքը, որ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները դիտարկվել են Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջություն, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին: Միևնույն ժամանակ ՀՀ հարկային օրենսգիրքը անդրադառնալով հարկերի և տուրքերի համակարգին, 7-րդ հոդվածում սպառիչ թվարկել է ՀՀ-ում կիրառվող վճարների բոլոր տեսակները, որոնց շարքում բացակայում է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը, և վերոհիշյալ տրամաբանությամբ, ըստ Ընկերության, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշների վճարը չպետք է դիտարկվեր հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ:

Այս դիրքորոշմանն է մեծապես նպաստել նաև այն հանգամանքը, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում որպես հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող՝ արձանագրված ժամկետանց պարտավորության առկայությունը պայմանավորված է եղել «Նյուպլաստ» ՓԲԸ-ի իրազեկված չլինելու հանգամանքով, քանզի Ընկերությունը արձանագրված ժամկետանց պարտավորության մասին տեղեկատվությունը կարող էր ձեռք բերել բացառապես «Նյուպլաստ» ՓԲԸ-ի՝ հարկ վճարողների անձնական հաշվի քարտի

քաղվածքի տվյալներում, իսկ ինչպես արդեն նշվել է, այդ ժամկետանց պարտավորության մասին վերոհիշյալ քարտում որևէ տեղեկատվություն բացակայում էր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է.Սարգսյանին խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ 28.09.2018թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ «Նյուպլաստ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (19.09.2018թ.) հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի պարտավորություններ, սակայն մասնակցին չի տրվել Կարգի 45-րդ կետով սահմանված մասնակցի կամ կոմիտեի կողմից մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու հնարավորություն:

Ավելին, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.09.2018թ. ժամը 14:00 նիստից հետո, Պատվիրատուն՝ չսպասելով Կարգի 45-րդ կետով սահմանված՝ նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրի ավարտին, նույն արձանագրությամբ՝ որոշել է «Նյուպլաստ» ՓԲԸ-ի տվյալները ներկայացնել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների

նախարարությանը՝ դրանով իսկ խախտելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները և «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով ընթացակարգի նախաձեռնման կարգը:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «Նյուպլաստ» ՓԲԸ-ին չվերագրել «Գմումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/147 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.10.2018թ. թիվ 01.1/26-3/18831-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 02.10.2018թ. թիվ Ե 619 և 09.10.2018թ. թիվ Ե 639 գրությունները, «Նյուպլաստ» ՓԲԸ-ի կողմից Բողոքներ քննող անձին 23.10.2018թ. ներկայացրած գրությունը, «ԱՀԳՀԱՊՁԲ–18/11» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԱՀԳՀԱՊՁԲ–18/11» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 20.09.2018թ. նիստի թիվ 2 և 28.09.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, «Նյուպլաստ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած մասնակցության հայտի պատճենը.

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կարիքների համար բարձր խտության պոլիէթիլենային խողովակների գնման նպատակով կազմակերպված «ԱՀԳՀԱՊՁԲ–18/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) հայտ է ներկայացրել «Նյուպլաստ» ՓԲԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված

մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՀԳՀԱՊՁԲ–18/11» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 20.09.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի շրջանակներում «Նյուպլաստ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 2,115,738 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն):

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է «Նյուպլաստ» ՓԲԸ-ին ճանաչել Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով Հանձնաժողովը 24.09.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել «Նյուպլաստ» ՓԲԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա՝ 19.09.2018թ. դրությամբ ՀՀ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.10.2018թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Նյուպլաստ» ՓԲԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 19.09.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 91,000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Ս.թ. սեպտեմբերի 28-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ Հանձնաժողովը՝ արձանագրելով «Նյուպլաստ» ՓԲԸ-ի հայտը ներկայացվելու օրվա դրությամբ 91,000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու փաստը՝ որոշել է այդ հիմքով «Նյուպլաստ» ՓԲԸ-ի հայտը մերժել:

ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.10.2018թ. գրությամբ «Նյուպլաստ» ՓԲԸ-ի տնօրենը նշել է, որ Ընթացակարգի շրջանակներում «Նյուպլաստ» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից արձանագրված ժամկետանց

հարկային պարտավորությունը եղել է դրոշմանիշային վճարների գծով, ինչը սակայն չի երևացել ՀՀ ԿԱ ՊԵԿ էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման համակարգի «հարկային պարտավորություններ» բաժնում: Ընկերության տնօրենը հայտնել է նաև, որ նշված պարտավորությունն արդեն իսկ մարվել է Ընկերության կողմից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա

ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կարիքների համար բարձր խտության պոլիէթիլենային խողովակների գնման նպատակով կազմակերպված «ԱՀԳՀԱՊՁԲ–18/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի՝

- 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական

եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.14 կետի համաձայն՝ Կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:
- 7.15 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային

օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Նույն հրավերի 7.14-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Նույն կետով նախատեսված լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- 19.09.2018թ. դրությամբ Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, որի համաձայն Ընկերությունը նշված օրվա դրությամբ ունեցել է եկամտային հարկի գծով 1,654,363 ՀՀ դրամի չափով, սոցիալական վճարի մասով 45,646 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություն, ինչպես նաև ավելացված արժեքի հարկի մասով 24,067,970 ՀՀ դրամի չափով դեբետային մնացորդ:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 28.09.2018թ. «Նյուպլաստ» ՓԲԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքը, որի համաձայն Ընկերությունը 17.09.2018թ. դրությամբ ունեցել է 91,000 ՀՀ դրամի չափով դրոշմանիշային վճարի գծով հարկային պարտավորություն:

- Ընկերության կողմից 27.09.2018թ. «Այ Դի Բանկ» ՓԲԸ-ի միջոցով՝ դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունների կատարման նպատակով, ՀՀ ԿԱ ՊԵԿ միասնական հարկային հաշվին փոխանցված 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով վճարման անդորրագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 151-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված՝ եկամտային հարկը հարկային

գործակալի կողմից հաշվարկելու, պահելու և պետական բյուջե վճարելու դեպքերում եկամտային հարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու ամիսը:

Նույն օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային գործակալները Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի գումարները պետական բյուջե են վճարում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.09.2018թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Նյուպլաստ» ՓԲԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 19.09.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 91,000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

- «Նյուպլաստ» ՓԲԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարըտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն

վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- 19.09.2018թ. դրությամբ Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 27.09.2018թ. եզրակացության մեջ արձանագրված՝ դրոշմանիշային վճարի գծով 91,000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորությունն արտացոլված չի եղել:

- Ընկերությունը հայտը ներկայացնելու օրը ղեկավարվել է հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում արտացոլված տեղեկատվությամբ, ըստ որի՝ նույն օրվա դրությամբ Ընկերությունն ունեցել է եկամտային հարկի գծով 1,654,363 ՀՀ դրամի չափով, և սոցիալական վճարի մասով 45,646 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություն, ընդ որում, նշված պարտավորությունների մարման վերջնաժամկետն է եղել 20.10.2018թ.:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում «Նյուպլաստ» ՓԲԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկատվությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից, հետևաբար «Նյուպլաստ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.10.2018թ. թիվ 01.1/26-3/18831-18 գրությամբ «Նյուպլաստ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ 09103261) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ